

**021201.03.6 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ԿԱՐԳԸ**

Ուսուցումը մի աստիճան է՝ բակալավրիատ:

«Հագուստի մոդելավորում» բաժնի շրջանավարտները ստանում են արվեստի բակալավրի որակավորում:

Բակալավրիատի ուսման տևողությունը չորս տարի է: «Հագուստի մոդելավորում» բաժին կարող են ընդունվել նրանք, ովքեր ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն, նկարչական ունակություններ ու հմտություններ, որոնք համապատասխանում են քննության պահանջին:

Դիմորդը պետք է հանձնի մեկ քննություն՝ «Գծանկար»:

«Գծանկար» առարկայի քննության ժամանակ հանձնարարվող առաջադրանքը նատյուրմորտ է՝ հարթ ֆոնի վրա 2-3 գիպսե առարկաներից, գրաֆիտե մատիտով պարզ լուսավորությամբ՝ A2 (594x420) ֆորմատի թղթի վրա: Հանձնարարության կատարմանը տրվում է 8 ակադեմիական ժամ 2 օր՝ 4- ական ժամ:

**«ԳԾԱՆԿԱՐ» ԱՌԱՐԿԱՑԻ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

«Գծանկարից» - Բնօրինակից ճիշտ տեղադրումը թղթի վրա, համաչափությունների ճշգրիտ արտահայտում, տրված լուսավորության պայմաններում արտահայտել ծավալները և տալ բնօրինակի նմանության բնութագիր:

Քննության ներկայանալիս դիմորդը իր հետ պետք է ունենա.

1. Նկարչական տախտակ A2 ֆորմատի թղթի համար (60x40 սմ),
2. Նկարչական A2 ֆորմատի 1 թերթ (գծանկարի համար),
3. Գրաֆիտե սև մատիտներ՝ չոր, միջին և փափուկ տեսակների,
4. Ռետին, սրիչ, կոճգամներ:

021201.03.6 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

011401.11.6 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«ԳԾԱՆԿԱՐ»

- | | |
|--|------------|
| 1. Թղթի մեջ առաջադրանքի ճիշտ տեղադրում և չափի որոշում | 0-5 միավոր |
| 2. Առաջադրանքի կազմող առարկաների և նրանց մասնիկների համաչափությունների պատկերագրում: | 0-5 միավոր |
| 3. Աշխատանքում լուսաստվերային, ծավալային խնդիրների և հեռանկարի արտահայտում: | 0-5 միավոր |
| 4. Առաջադրանքը կազմող առարկաների նյութականության արտահայտումը և գրաֆիկական կատարողական կուլտուրան: | 0-5 միավոր |
- Ընդամենը 20 միավոր

011401.11.6 «ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

քննություն- «Գծանկար»

Քննությունը անցկացվում է երկու օրում 4-ական ակադեմիական ժամ տևողությամբ:

Տվյալ օրվա քննության բոլոր դիմորդները քննասենյակներում իրենց տեղերը զբաղեցնում են վիճակահանությամբ: Երկրորդ օրվա քննության ավարտից հետո բոլոր աշխատանքները հավաքվում, ծածկագրվում են պատասխանատու քարտուղարի կողմից և հանձնվում առարկայական քննական հանձնաժողովի նախագահին գնահատման համար:

Գնահատման ավարտից հետո կատարվում է աշխատանքների ապածածկագրում և գնահատականները փոխանցվում են քննական ամփոփաթերթի մեջ: